

տարազ մատուցանել ի Բեթղեհէմ, տեսուր ուզեն ի Փռանկին ըռէիզէն, կամ իւր վէզիւլէն, որպէս որ յառաջմէ եղեր է սահմանք, եւ տայ ըռէիզն կամ վէզիւրն տեսուր Հայոց ազգին հանապազ: Վասն այն սիրոյ եւ միաբանութեան պատճառին որ եղեւ, ազօթեն եւ պատարազ մատուցանեն, որպէս որ յառաջին ժամանակէն ի վեր սահմանք ունին, արվի այնպէս զիւրեանց պատարազն մատուցանեն: Վասն սիրոյ պատճառի, թէ հայ է թէ ասորի, եւ թէ զպտի եւ թէ հապաշ, տեսուր տան որ զիւրեանց ուխտը կատարեն ի Բեթղեհէմ: Եւ վասն այս պատճառին եւ սիրոյն համար, զայս ամէն բաներն, թէ հօճէթներ է եւ թէ էմբեր է, որ նոր են հանած Հայոց ազգն, զամէնն պաթալ անեն, որ սիճիլ եղեր է Երուսաղէմ: Եւ յետ այսորիկ զինչ որ ուխտ ու դաշինք եղեր է նոր որպէս եւ միաբանեցան, զրեն նոր թուխթ. եւ չէնեն որպէս որ յառաջն հակառակութիւն եղեւ, վասն մոմի վառելոյ, ի պատանատեղացն վերայ, ու այն էմբերն եւ թխթերն, որ իւրեանց հետն է, պաթալ էնեն եւ ի բաց ձգեն: Եւ թէ Աստուածամօր գերեզմանն, որպէս որ յառաջմէ հին ժամանակէ, կարգ ու սահման եղեր է, արվի այն զանունան թող առնեն: Վասն այսմ բանի եւ պատճառի, զինչ որ եղեր է, զամենայն ի բաց թողուն, որ սէր եւ միաբանութիւն հաստատի: Եւ դարձեալ Աստուած նասիպ չենէ, որ թէ հակառակութիւն լինի իւրեանց մէջն. նա՛ առանց պալիօղնե-